# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՈՒՐԱՍԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ուրասարի համայնք, հասցե 3-րդ փ. շենք 25
Հեռախոս 093644146 , էլ. Փոստ urasar.lori@mta.gov.am

Թիվ 57
09.06.2016թ.

ՀՀ Լոռու մարզպետ
Ա.Նալբանդյանին

Հարգելի պարոն Նալբանդյան

Ձեզ եմ ներկայացնում Ուրասար համայնքի ավագանու 08.06.2016թ. արտահերթ նիստի թիվ 9 որոշումը :

Առդիր՝ 2 թերթ:

Ուրասար համայնքի ղեկավար Ա.Կիրակոսյան

ՈՒՐԱՍԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
06400829

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ՈՒՐԱՍԱՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ուրասարի համայնք, հասցե 3-րդ փ. 25 շ,
Հեռախոս 093644146, էլ. փոստ urasar.lori@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

« 08 » հունիսի 2016 թվականի N 9

ՈՒՐԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<ՏԻՄ>> օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ կետով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաները կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով, հիմք ընդունելով ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 2015թ. թիվ 222-Ա հրամանը՝ <<Սագամար>> ՓԲ ընկերության թիվ ԼՎ-093 լեռնահատկացման ակտի,<<Սագամար>> ՓԲԸ գրությունը և հաշվի առնելով համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությունը՝

Համայնքի ավագանին որոշում է.

1. Հավանություն տալ ՀՀ Լոռու մարզի Ուրասար գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում առաջարկվող հողամասի նպատակային նշանակության փոփոխման առաջարկությանը՝ Ուրասար գյուղական համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 06-106-0134-0038,06-106-0134-0033 ծածկագրերով 28.1668 հեկտար արոտավայրերի և 06-106-0134-0036 ծածկագրով 0.30055 հեկտար վարելահողի նպատակային նշանակությունը՝ արտադրական թափոնների թափման նպատակով փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակության, արդյունաբերական գործառնական նշանակության:

2. Համայնքի ղեկավարին՝ հողամասի նպատակային նշանակության փոփոխման վերաբերյալ կազմված հողաշինարարական գործը ներկայացնել հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման ՀՀ Լոռու մարզային հանձնաժողովի քննարկմանը:

3. Ուժը կորցրած ճանաչել Ուրասար համայնքի ավագանու 2016թ. ապրիլի 1-ի <<Ուրասար համայնքի տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի նպատակային նշանակության փոփոխման մասին >> թիվ 3 որոշումը:

| Անուն ազգանուն | Կողմ | Ձեռնպահ | դեմ |
|---|---|---|---|
| Ապիկյան Մարտին | | | |
| Գևորգյան Վարդան | | | |
| Մուրադյան Արմեն | | | |
| Վարդանյան Արժանիկ | | | |

Համայնքի ղեկավար՝ Ա.Կիրակոսյան